

ԳԱՌՆԻԿ ՍՏԵՓԱՆԵԱՆ, ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ, Ա. հտր. Ա-Թ, Երևան, 1973, 382 էջ:

Մշակոյթը էապէս մարդկային էակներու ծնունդ է: Եւ այդ մշակոյթին հողոյթի ռուսումնասիրութեամբ զբաղողները՝ բանասէր, դրաբէտ, ուսանող, աշակերտ եւ վերջապէս սովորական ընթերցող, հետաքրքրուած են անհատի մը օրերուն համազումարը եւ զոչ կեանքով, իմա՝ կենսազբաղական տուեալներով:

Անցեալին՝ հայ մատենադրական, դրական, հայրենակցական միութեանց դաւաններու նուիրուած դործերուն, ինչպէս նաեւ տարեկիւրքերու մահազրութեանց բաժնին մէջ, լոյս ընծայուած են կենսազրութիւններ, սակայն մէկ կողքի տակ համապարփակ դործ մը, որ ընդգրկէր հայ մշակոյթին դանազան կալուածներուն երախտաւորներուն կենսազրականները, կը պակսէր: Փորձեր եղած են այս մարզին մէջ, սակայն, դանազան պատճառներով անոնք մնացած են անաւարտ:

Անձնանուններու եւ տեղանուններու բառարաններուն, ինչպէս նաեւ դիրքի եւ մամուլի ցուցակազրութիւններու պատրաստութիւնը այլ ժողովուրդներու մօտ, հաւաքական աշխատանքի արդիւնք է: Մեր մօտ, սակայն, տարբեր է պարագան: Մեր մէջ անհատական ձեռներէցութիւնը՝ հայ մշակոյթի դանազան երեսներու ուսումնասիրութեան դործին մէջ, աւելի արդիւնաւէտ դուրս եկած է: Սակայն հայ մամուլի, հայ դիրքի, հայ տեղանուններու եւ հայ կենսազրութեանց պատրաստութիւնը այնքան ընդարձակ կալուածներ են, որ անհատի մը կեանքը անբաւարար եղած է զանոնք իրականացնելու կամ ամբողջացնելու: Այս եղած է պարագան Հայր Էփրէիկեանի «Բնաշխարհիկ Բառարան»ին, Հայր Ղազիկեանի՝ «Հայկական Նոր Մատենադիտութիւն եւ Հանրադիտարան Հայ կեանքին», եւ Հայր Պոտուրեանի՝ «Հայ Հանրադիտակ»ին:

Կենսազրական բառարաններու պատրաստութեան մէջ ի՞նչ է մեր անցեալին ժառանգը: Մեզ հետաքրքրողը՝ զուտ հայ կեանքին վերցուած կենսազրութիւններն են: Այս մարզին մէջ յիշատակութեան արժանի երկու փորձի կը հանդիպինք:

Ա. Հայի Տէր Աստուածատրեանց, «Բառարան Հայ կենսազրութեանց (1441-1904)», Պրակ Ա., Ա. տառ, Թիֆլիս, 1904, 184 էջ:

Աշխատաստան դործ մը, որ կը պարունակէ շուրջ 150 կենսազրական՝ 45 պատկերներով: Իր անունը արդարացնող հրատարակութիւն մը: Ախոս որ դործը չէ ամբողջացած: Սակայն օրինակ կրնայ ծառայել հետազայ հրատարակութեանց:

Բ. Հայր Մկրտիչ Պոտուրեան, «Հայ Հանրադիտակ», Պուքրէշ, 1938-1940, Ա-Ե. հատոր, 970 էջ:

Իր ընդլծով զուտ կենսազրական բառարան մը չէ այս մէկը, որովհետեւ կենսազրութեանց կողքին կը պարունակէ նաեւ այլ նիւթեր՝ հայ մատուլ, հայ տեղազրութիւն: Կենսազրութեանց կարկինը քիչ մը լայն բացուած է հոս, ընդզրկելով մշակութային գործիչներու կարգին՝ նոյնիսկ հայ առեւտրականներ: Իր ժամանակին խճրճուած է Պոտուրեանի գործը կենսազրութեանց այս բազմազանութեան համար, սակայն մենք համաձայն կը մնանք որդեգրուած աշխատանքի այդ եղանակին: Հայ մշակոյթի դանձարանին մէջ իր լուսան դնող հայ համեստ աշխատաւորէն մինչեւ գրագէտը, հայ ազատագրութեան համար իր արիւնը թափող Ֆէտայիէն մինչեւ հանրագետութեան նախագահը ծնունդն են հայ կեանքին, եւ զայն կերտողները: Իւրաքանչիւրը «գրոց արժանի» գործ կատարած է, եւ կենսազրական բառարան մը պարտաւոր է անդրադառնալ իւրաքանչիւրին, անշուշտ ամէն մէկուն դերին եւ արժէքին համապատասխան տեղ (տողեր) յատկացնելով:

Հայր Պոտուրեանի այս գործը պիտի բաղկանար շուրջ 4000 էջերէ, սակայն, Համաշխարհային Բ. Պատերազմի բռնկումով տըպագրութիւնը կանգ առաւ, հազիւ 970 էջի լոյս ընծայումէն ետք: Հինգ հատորները կը պարունակեն Ա-Ը գիրքերը: Աշխատանքին զըլխաւոր արժանիքներէն մէկն է անոր նկարագրող ըլլալը:

Կենսազրական բառարանի մը պատրաստութեան ատեն, երբ ատիկա մասնաշաղկուտ չէ կալուածի մը, զըլխաւոր հարցը, որ կը ցցուի, հետեւեալն է. որո՞նք նկատի ունենալ եւ գորոնք անտեսել: Շատ ընդարձակ է շրջանակը: Իր մէջ կը պարփակէ գրագէտներ, հին անունով՝ մատենագիրներ, դերասաններ, խմբագիրներ, տպագրիչներ, հոգեւորականներ, առեւտրականներ, գործարանատէրեր, բարերարներ ու մեկնասաններ, բժիշկներ, դեղագործներ, քաղաքական գործիչներ, յեղափոխական դէմքեր, օտար հայագէտներ, եւլն.:

Գառնիկ Ստեփանեանն ալ դէմ յանդիման գտնուած է այս հարցին եւ տուած է իր լուծումը: «Մեր բառարանում տեղ են գտել հիմնականում հայ մշակոյթի գործիչները: Անշուշտ, մշակոյթ հասկացողութիւնը շատ է ընդարձակ: Մենք աչքի առաջ ունեցել ենք գրողներին, արուեստագէտներին, հրատարակախօսներին, դրական նագէտներին, արուեստարաններին, լեզուաբաններին, թարգմանիչներին, ինչպէս նաեւ կրթական գործիչներին (եթէ նրանք մանկավարժական աշխատանքին զուղընթաց ունեցել են դրական գործունէութիւն, աշխատակցել են ժամանակի մամուլին կամ հրատարակել են դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ):

«Վստահ ենք, բառարանի հետ գործ ունեցողների համար հասկնալի կը լինեն այս ընդհանուր սկզբունքից արուած հետեւեալ բացառութիւնները.

«ա. Պետական, քաղաքական այն դործիչները կենսադրու-
թիւնները, որոնք արժանացել են միջազգային կամ համամիութենա-
կան ճանաչման:

«բ. Այն դործիչներին, որոնք ծագումով հայ են, բայց հայ
ժողովրդի ճակատագրի բերումով համընդհանուր ճանաչման են ար-
ժանացել օտար ժողովուրդների դրականութեան ու արուեստի մէջ:

«գ. Բառարանում տեղ են դրանելու նաեւ օտարազգի հայազէտ-
ները, որոնց կենսադրականները կը զետեղուեն երրորդ հատորի յա-
ւելումածում» (էջ 5):

Այս հիմամբ պատրաստուած «Կենսադրական Բառարանը» պի-
տի պարունակէ շուրջ 10·000 անուն, երեք հատորով: Այս ծաւալուն
դործին Ա. հատորն է որ լոյս ընծայուած է «Հայաստան» հրատա-
րակչութեան կողմէ, Երևան, 1973 թ.ին եւ կը բաղկանայ 382 ման-
րատառ երկսիւնակ էջէ, պարունակելով Ա-Թ տառերով կենսադրա-
կաններ:

Գ. Ստեփանեան յտաւորէն չէ ճշգորշած թէ իր ընդունած
անձերու ընտրութիւնը ինչ հիման վրայ կատարած է, սակայն մեր
տղաւորութիւնը այն է, որ հիմնականօրէն ան նկատի առած է մեր
մշակոյթի այն դործիչները, որոնք զիրք մը կամ զիրքեր հրատարա-
կած են, եւ կամ՝ հրատարակադրական դործունէութիւն ցուցարե-
րած: Ուրեմն՝ մեր զնահատանքն ու քննադատութիւնը կը վերապա-
հենք իր ընդունած սահմաններուն:

Որոշ ծրարի մը կամ ուղեգրի մը հետեւած է Գ. Ստեփանե-
ան՝ կենսադրական տեղեկութիւնները մէկտեղելու իր աշխատանքին
մէջ: Պատասխանը դրական է: Ծննդեան եւ մահուն թուականներ
(եթէ ծանօթ են պատրաստողին), 'ասպարէզի՝ ճշդում՝ դերասան,
զրազէտ եւլն., կրթութեան զանազան շրջաններ, հանրային դործու-
նէութիւն (երբեմն տարիներու թուումով), թերթերու աշխատակցու-
թիւն եւ առանձին գիրքերու հրատարակում: Ենթական արժեւորելու
մասը դուրս է ուսումնասիրողին նպատակէն:

Հսկայական աշխատանք մըն է «Կենսադրական Բառարանը»,
եւ բարձր զնահատանքի արժանի: Գործ մը, որուն անհրաժեշտու-
թիւնը կը զբաւցուի մեր մէջ ամէն օր: Խմբագիրը, բանասէրը, ուսա-
նողը, իրենց ձեռքին տակ պէտք է ունենան նման դործ մը, որ թէեւ
սպառիչ տեղեկութիւն չի տար տուեալ անձին մասին, սակայն կըր-
նայ իրենց մտածումը չարճիկող կարգ մը հարցումներուն պատաս-
խանը տալ:

Այսպիսի լայնածաւալ դործ մը, որ իր նախընթացը չունի՝ անոր
թերացումներէն օգտուելով՝ յարաբերաբար կատարեալ դործ մը
մէջտեղ կարենալ բերելու համար, ունի անխուսափելի թերիներ, ո-

րոնց մատնանշումը կ'ուզենք կատարել նաև այստեղ :

ՎՐԻՊԱԿՆԵՐ ԵՒ ՍԵԱԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Աբրահամ Արծիւեան (էջ 17) — «Մշակութային դործիչ: Ծընուել է Այնթապ քաղաքում (Սիրիա)»: «Մշակութային դործիչ» ազօտ բացատրութեան տեղ պէտք է ըսել հոգեւորական, հիմնադիր Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան: Ոչ միայն Արծիւեանի պարապային, այլ ընդհանուր առմամբ ենթականերուն հանդամանքները ճշդող տրտղոսներու անտեսում մը դոյութիւն ունի: Ոչ մէկ տեղ կարելի է հանդիպել ներկայացուող եկեղեցական անհատին պաշտօնը նշող աստիճանին (կթղ., եպո., զհնյ., եւլն.), կամ՝ անձի մը ուսումնական մարդին մէջ ձեռք բերած տրտղոսին: Իսկ Այնթապ քաղաքը Սուրբ Ստեփանոսի վրայ Հայկազի պատկանած ըլլալ, սակայն աշխարհագրականորէն մաս կազմած է Կիլիկիոյ:

Ալիիար Յարութիւն (էջ 56) — Ստեփանեան կը զբէ. «Նրա երդիծական դործերից մի քանիսը ամփոփուած են «Փանթեղի» ժողովածուում (Կ. Պոլիս, 1913): Գիրքին խորագիրն է «Փանթաղի-Արձակ եւ համարձակ դրականութիւն»: Իսկ առանձին հատորով Ալիիար լոյս ընծայած է նաև «Առաջին անգամը» (Փանթեղի նորայիշոյ), «Աշխարհիկ Մատենագարան», Ա., Կ. Պոլիս, Տպագր. «Մանդուկի», 1908, 12 էջ, եւ «Բմայքի Ծաղիկները», Կ. Պոլիս, 1917, 56 էջ:

Աղազաբեան Միհրան (էջ 65) — Աւելցնել՝ խմբագրած է Պէյբուրթի մէջ լոյս տեսած Աճէմեան եղբայրներու «Ախրանան»ը (1931 թ.) եւ Միհրտիչ Կապրաշի «Ժողովուրդ»ը (1932 թ.):

Աղբալեան Նիկոլ (էջ 72) — «Առանձին զիրքերով հրատարակած դործերից են՝ «Ստեփաննոս Նազարեանց», «Բանասէրի Յուշագիրը», «Հայ Գրականութեան Պատմութիւն», Ա. հտր., (1947) եւլն.:

Անհրաժեշտ է աւելցնել՝ «Բանասէրի Յուշագիրը», Ա-ԻԲ. պրակ, 1937-1942: Իսկ Ստեփանեանի կողմէ նշուած վերջին զիրքին վերնագիրը սխալ է: Պէտք է ըլլայ՝ «Պատմութիւն Հայոց Գրականութեան», Պէյբուրթ, 1947, 212 էջ:

Աղբալեան իր ողջութեան լոյս ընծայած է նաև այլ դործեր: Ն. Հանգոյց ծածկանունով առանձին զբքոյկներով լոյս ընծայած է 1) «Մտածումներ Հ. Յ. Դաշնակցութեան մասին», Հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, 1930, Մատենաշար «Դրօշակ», Թ. 68, 120 էջ: 2) «Մեր Կանոնադիրը» (Հ. Յ. Դ. Ի) Պէյբուրթ, 1937, 16 էջ: 3) «Կրկին Մեր Կանոնադիրը», Պէյբուրթ, 1937, 16 էջ: 1900-ական թուականներուն լոյս ընծայած է «Սոցիալիստ-Յեղափոխականների Ծրագիրը»: Աղբալեանի մահէն ետք Համազգայնի Հրատարակչութիւնը

լոյս ընծայած է անոր «Դասախօսութիւններ Հայ Մատենադրութեան Մասին» գործը, Պէյրութ, 1951, 232 էջ: Համադրային Մատենաշարը ձեռնարկած եւ լոյս ընծայած է Այրալեանի «Ամբողջ. Երկերը» եւ ցարդ լոյս տեսած է 4 հատոր (1959-1970):

Ասատուր Հրակո (էջ 113) - Աւելցնել՝ եղած է «Մասիս» օրաթերթի (արտ. Յովհաննէս Եղուսեան) խմբ. կազմի անդամ, իր կողմը՝ Սիպիլի (Զապէլ Ասատուր) եւ Գրիգոր Զօհրապի Հետ, 1898 թ.: Նաեւ խմբադրած է Պոլսոյ Ս. Փրկիչ Հիւանդանոցի «Ընդարձակ Օրացոյց»-ները (1902-1905), տարիները տակաւին ճշգրիտ:

Արփիարեան Տիգրան (էջ 161) - Յիշատակուած է թէ խմբադրած է «Մասիս» եւ «Արեւելք» պարբերականները: Տ. Արփիարեանի խմբադրութեան շրջանին (ճշգրիտ տարիները՝ 1901-1906 թթ.) «Մասիս» լոյս կը տեսնէր որպէս շարաթաթերթ: «Արեւելք»-ն ալ պարբերական չէ այլ՝ օրաթերթ:

Գարամանեան Սիմոն (էջ 209) - Ստեփանեան կը դրէ. «1909 թուին լոյս տեսած է նրա «Նոր Բառգիրք Հայերէն Լեզուի» բառարանը»: Կայ տարեթիւի եւ խորագիրի սխալ: Բառարանը լոյս տեսած է 1910 թուին, եւ «Բառգիրքը» պէտք է ըլլայ «Բառագիրք»:

Գայանեան Յովհաննէս (էջ 224) - Գրուած է. «Նրա ամենաարժէքաւոր երասիրութիւնն է «Գանձարան-Բառարան» «Հոմանիչների բառարանը, որը լոյս է տեսել 1934 թ.-ին Կահիրէում»: Ճշգրիտ եւ աւելցնել՝ «Բառարան-Գանձարան Հայ Լեզուի», լոյս տեսած 1938 թ.-ին:

Գարմէն Լեւոն (Ստեփանեան) (էջ 273) - Աւելցնել՝ ծնած է Հալէպ, 1914 թ.-ին եւ մեռած Պէյրութ, 1966 թ. օգոստոսի 25-ին: Լոյս ընծայած է «Վայրկեաններ» քերթողագիրքը, 1947 թ.-ին:

Եղած է խմբադրատեղաւ Պաղտատի «Գոյամարտ» շարաթաթերթին, եւ մահէն առաջ, կարճ շրջան մը՝ Պէյրութի «Ազդակ» օրաթերթին: Պաղտատէն Պէյրութ փոխադրուած էր որպէս «Ազդակ» օրաթերթի խմբադրատեղաւ, սակայն կարճ ատենէն յանկարծամահ եղած:

Գոչուկեան Մարտիրոս (էջ 251) - Աւելցնել՝ Թորոս Աղատեանի Հետ խմբադրած է «Ժամանակ» օրաթերթի 40-ամեակին նուիրուած բացառիկ հատորը (Պոլիս, 1948):

Գոլյուսեան Մեսրոպ (էջ 271) - «1950 թ. Կահիրէում լոյս է տեսել նրա «Ընդարձակ Բառարան Հայերէն Անգլերէն Բառգիրքը»: Տպագրել է նաեւ այլ բառարաններ»:

Այլ բառարանները՝ 1) «Ընդարձակ Բառարան անգլերէն Հայերէն» (Գահիրէ, 1961), 2) «Գրպանի Նոր Բառարան, անգլերէն-Հայերէն» (Պէյրութ, 1969), 3) «Ընդարձակ Բառարան յատկաբանութեան եւ առածներու» (Գահիրէ, 1969):

Ելման համար Եմանուէլ (էջ 337) – Գրուած է. «Որպէս մենակատար մասնակցել է Համարաձում Պէրպէրեանի եւ Աշոտ Պատմագրութեանի համերդներին»: Ոչ մէկ ակնարկութիւն Բարսեղ Կանաչեանի: Եթէ Տոքթ. է. Էլմանեանի մենակատարութեան ակնարկութիւն պիտի ըլլայ, այդ պատիւը տոնէն աւելի կ'երթայ Բարսեղ Կանաչեանի, որուն «Գոռան» երգչախումբին անվճար մենակատարը եղած է ան քառորդ դարէ աւելի:

Թէոդիկ (Թէոդորոս Լապիմեան) (էջ 356) – Ճշդէլ՝ Թէոդորոս Լապիմեան:

Թեւեամ Բագարատ (էջ 358) – Աւելցնել՝ խմբագրած է նաեւ «Պարտէզ» մանկական թերթը (1946–67 թթ.), Ատրինէ Տատրեանի եւ Տիկ. Արմենուհի Տոքթ. Խոզէրի հետ:

Թէֆէեան Վահան (էջ 362) – Թէքէեանի քերթողական գիրքերուն մէջ կը յիշատակուի «Կէս Գիշերէն Մինչեւ Լուսարաց» (1918): Որպէս իմաստ ճիշդ է, սակայն պէտք է ըլլայ՝ «Կէս Գիշերէն Մինչեւ Արշալոյս»:

Թօփալեան Բիւզանդ (էջ 375) – Չէ՛ յիշատակուած Տպ. Արաքսի հիմնումը, որ խթան հանդիսացած է Թօփալեանի դրական եւ խմբագրական («Անդաստան» պարբերաթերթ) աշխատանքներուն: Տպարանը հիմնուած է Հալէպ, 1924 թ.ին, եւ 1930–ական թուականներու սկիզբը Թօփալեանի Բարիկ տեղափոխումով՝ վերահաստատուած է Բարիկի մէջ:

ՃԵՂՈՐՈՇՈՒՄԸ ԾՐԱԳՐԻ ՄԸ ՀԵՏԵՒՈՂՈՒԹԵԱՆ ՊԱԿԱՍ

Գ. Ստեփանեան յոտակ ծրագիր մը կամ հարցարան մը չէ ունեցած իրեն որպէս ուղեցոյց: Այլպէս ինչպէ՞ս կարգ մը գրողներու գիրքերուն տպագրութեանց տարեթիւերը բժախնդրօրէն կը յիշատակէ, իսկ այլոց պարագային՝ ոչ: Կարգ մը տեղեր, ինչպէս Բագարատ Թեւեանի պարագային՝ (էջ 358) կը յիշատակէ ծածկանունները, իսկ ուրիշներու պարագային՝ ոչ:

Վ. Թէքէեանի պարագային կը յիշատակէ թէ յետ մահու լոյս ընծայուած են բանաստեղծին ամբողջական երկերը 14 հատորով, իսկ Ա. Ահարոնեանի, Ն. Աղբալեանի պարագային՝ ոչ մէկ ակնարկութիւն: Արդարեւ Ա. Ահարոնեանի ամբողջական գործերը լոյս տեսած են յետ մահու՝ 10 հատորով (1947–49 թթ.): Ա. հատորին յոռաջարանը՝ դրուած գրադէտին մտաւորական զաւակին՝ Վարդգէս Ահարոնեանի կողմէ, հիմնական աղբիւրը պէտք էր կազմեր Ա. Ահարոնեանի կենսագրութեան համար:

Կենսագրական տուեալներուն չափ անհրաժեշտ են յիշատակումը այն մենագրական աշխատասիրութիւններուն, որոնք նուիրուած են այս կամ այն անձին: Աշխատասիրողը դիտակցութիւնը ու-

նեցած է այս իրողութեան, եւ որոշ անձերու պարագային, ինչպէս Գրիգոր Զօհրապ, Պ. Դուրեան, կը յիշատակէ զանոնք, սակայն այս մարդին մէջ ալ հետեւողական չէ եղած: Ոչ մէկ յիշատակում Ա. Ահարոնեանի, Նիկողայոս Աղոնցի նուիրուած մենագրական աշխատանքներուն: Ա. Ահարոնեանի մասին մենագրական աշխատասիրութիւն մը ունի զրական քննադատ Մկրտիչ Պարսամեան, «Ա. Ահարոնեան – իր կեանքը եւ զրականութիւնը» (Բարբիզ, 1930), նաեւ Յովհաննէս Աւագեան, «Ա. Ահարոնեան եւ Ա. Ահարոնեանի Ղէզոյի Արտը»:

Իսկ Նիկողայոս Աղոնցի մասին՝ Գառնիկ Գիւլպալեան, «Նիկողայոս Աղոնցը որպէս պատմաբան», որ նախ լոյս տեսած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պաշտօնաթերթ «Հասկ»ի մէջ, ապա որպէս առանձնատիպ: Աղոնցի մասին զրած է նաեւ Մուշեղ Իշխան, «Երեք Մեծ Հայեր (Շանթ, Աղբալեան, Աղոնց)», նախ լոյս տեսած «Աղբարար» շաբաթաթերթին մէջ, ապա՝ առանձին հատորով:

Երբեմն մենագրական աշխատասիրութիւններու չափ եւ աւելի արժէք ունին որոշ անձերու, սովորաբար զրազէտներու նուիրուած բացառիկները (մամուլի): Օրինակ՝ Թլկատինցիի նուիրուած «Նոր Գիր» պարբերաթերթի (խմբ. Բենիամին Նուրիկեան) բացառիկը (ԺԲ. տարի, 1950, Թ. 3-4, 128 էջ): Կամ՝ Նիկոլ Աղբալեանի նուիրուած Պէյրութի «Ակօս» երկամսեայ հանդէսին բացառիկը (ԻԱ-ԻԲ. դիրք, 1947, 228 էջ):

Ուսումնասիրողներու համար թանկագին օժանդակութիւն պիտի ըլլար յիշատակումը ինքնակենսագրութիւններու: Օրինակ՝ նման ինքնակենսագրութիւններ ունին Վահան Թէքէեան (Թէոդիկ, «Ամենուն Տարեցոյցը», 1912, էջ 387-91), Դանիէլ Վարուժան (Թէոդիկ, «Ամենուն Տարեցոյցը», 1909, էջ 78-79), Գ. Զօհրապ (Կարօ Իէորդեան, «Ամենուն Տարեդիրքը» 1965, էջ 138), եւլն.:

ՅՅԻՇԱՏԱԿՈՒԱԾ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Անարոնեան Վարդգէս (1888-1965 թթ.) – Մշակութային գործիչ: Որդին Աւետիս Ահարոնեանի: Մաս կազմած է Պոսթընի «Հայրենիք» օրաթերթի խմբ. կազմին: Հեղինակ Յ. Թումանեանի նուիրուած մենագրութեան մը (Պոսթըն, 1936):

Անէմեան Գեորգ – Երաժշտութեան ուսուցիչ եւ դպրասպետ: Շրջանաւարտ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքէն եւ երաժշտութեան ուսուցիչ նոյն հաստատութեան մէջ: Երաժշտութեան ուսուցիչ եւ դպրասպետ՝ Հալէպի մէջ, ուր լոյս ընծայած է «Հայերէն Երգէ» պրակներու շարքը:

ԱյգուԱի վագգէն (Գեորգ Պաղմեան) – Կրթական գործիչ: Հիմնադիր եւ խմբագիր «Հայ Գիր» զրական ամսաթերթի (Պէյ-

րութ, 1939–1944 թթ.) : Հեղինակ՝ 1) «Դեպի Երկիր» (աղբ. Թատրեր-
դուրիւն : 3 արար), Պէյրութ 1941 : 2) «Պատմութեան Գիրք» դա-
սաղիրք հայոց պատմութեան, Ա-Դ. շարք (Պէյրութ, 1952) : 3)
«Arméniens, Peuple Tragique», Պէյրութ, 1945, 103 էջ : Ներկա-
յիս՝ Գանատա, համալսարանի դասախօս :

Ապրանեան Մանուկ (1892–1944 Նոյ.ի 6) – Ուսուցիչ, դիտու-
թեան մարդ, հանրային դործիչ եւ խմբագիր : Խմբագրած է Պոլսոյ
«Ճակատամարտ» (1920–ական թուականներուն) եւ Պէյրութի «Աղ-
դակ» օրաթերթերը (1940–ական թուականներու սկիզբը) : Հիմնած եւ
խմբագրած է Պոլսոյ «Մարմարա» (1925 թ.) եւ «Աղղարար» : 1937
թ.ին կը հեռանայ Պոլսէն եւ կարճ շրջան մը Իսկէնտէրուն մնայէ
եռք կը հաստատուի Պէյրութ, ուր կը վերահրատարակէ «Աղղարար»
որպէս շաբաթաթերթ (1942–1944 թթ.) : Որպէս դիտութեան մարդ
լոյս ընծայած է «Դիտութեան Դասեր» դասաղիրքերու շարքը (Ա-Դ.
տարի) եւ «Բնագիտութիւն» դասաղիրքը :

Աստարեան Գրիգոր Տոքթ. – Հեղինակ քանի մը գիրքերու,
1) «Ընդարձակ, Ընդհ. Արարական Պատմութիւն, 2500 Ն. Ք. –
1918», Պէյրութ, 1961 : 2) «Պատմութիւն Արարական Գրականու-
թեան եւ Մշակոյթիւն – Նախնական դարերէն մինչեւ քսանե-
րորդ դար», Պէյրութ, 1970 :

Գազանեան Յարութիւն Տոքթ. (Յ. Գեղարդ) – Խմբագիր
«Աղօս»ի (1950–53 թթ.) եւ «Բժիշկ»ի (1955էն մինչեւ այսօր) : Հեղի-
նակ՝ 1) «Լիբանանեան Համանուագ», Պէյրութ, 1957, 2) «Գայլի Աւե-
տարան» Պէյրութ, 1963, 3) «Ուռկանը», Պէյրութ, 1968, գրական
դործերուն :

Գէորգեան Կարոյ (Ծն. 1896) – Բեղուն խմբագիր եւ հրատարա-
կագիր : Խմբագրական կազմի մաս կազմած է Պոլսոյ «Ճակատա-
մարտ»ին (1921–22 թթ.), Բարիլի «Յառաջ»ին (1950–1951 թթ.),
Գահրէի «Յուսարեք»ին (1951–52 թթ.) : Որպէս առանձին խմբա-
գիր խմբագրած է Սելանիկի «Ալիք» օրաթերթը (1925–1927 թթ.),
Սոֆիայի «Ռազմիկ»ը (1942–44 թթ.) : Այլոց օժանդակութեամբ
խմբագրած է Շթութիարտի «Տարագիր»ը (1946 թ.) «Բանրեք»ը
(1948–1949 թթ.) : Հիմնադրած եւ խմբագրած է Սելանիկի «Կամիթ»ը
(1927 թ.) «Հորիզոն»ը (1927–1937 թթ.) եւ «Ամենուն Տարեգիրքը»
(Պէյրութ, 1954–1968 թթ.) :

Թիւթիւնեան Վազգէն – Գծադրութեան եւ նկարչութեան ու-
սուցիչ : Ծնած է Պոլսու եւ շրջանաւարտ Վենետիկի Մուրատ Ռա-
ֆայէլեանէն : Արուեստի վերարեբեալ յօդուածներով աշխատակցած
է Պէյրութի «Զարթօնք» օրաթերթին :

Մենք մանրամասն քննութեան եւ ստուգման չենք ենթարկած
կենսագրական այս բառարանը : Մեր մատնանշած թերիները, վը-

րիպակներն ու մոռացումները ընդհանուր ակնարկի մը արդիւնք են : Սակայն թերի դործերն են, որոնք ուղեցոյց պիտի ըլլան անթերի դործեր արտադրելու : Եւ կարդ մը թերիներուն պատասխանատուն Գ. Ստեփանեանը չէ, այլ հայ մշակոյթի պատմութիւնը ինք : Ինչո՞ւ : Փորձենք պատասխանել :

Կենսադրական նման բառարաններու պատրաստութենէն առաջ անհրաժեշտ են որ կատարուած ըլլան նախապատրաստական այլ աշխատանքներ :

1. Հայ Մամուլի Լիակատար Յուշակ : Փորձեր կատարուած են Հայր Գալէմքարեանի, Գարեգին Լեւոնեանի, Յովհաննէս Պետրոսեանի եւ Ամալիա Կիրակոսեանի եւ այլոց կողմէ, սակայն տակաւին անծանօթ մնացած, այսինքն՝ չցուցակադրուած բազմաթիւ թերթեր կան : Ձի բաւեր անձի մը պարազային յիշատակել թէ խմբադրած է այսինչ թերթը, այլ պէտք է ճշդել խմբադրութեան տարիները, եթէ կարելի է՝ նոյնիտիկ ամիսն ու օրը : Վերոյիշեալ բոլոր ցուցակադրումներն ալ թերի են այս մարդին մէջ :

2. Հայ Գիրքի Մատենադիտութիւն : Խոսքն մարդ չէ : Աշխատանքներ կատարուած են Հայր Զարհանեւեանի, Լէոյի, Հայր Արսէն Ղաղիկեանի, Թէոդիկի եւ ուրիշներու կողմէ : Եթէ բաւականաչափ ուսումնասիրուած եւ ցուցակադրուած է նախա-եղեռնեան եւ Խորհրդային Հայաստանի հայ գիրքը, արտասահմանեան հայ գիրքին պատմութիւնն ու մատենադիտութիւնը մնացեր են բարձի թողի : Անհրաժեշտ է այս վերջին աշխատանքը, որպէսզի ամբողջանայ հայ գիրքին պատմութիւնը :

3. Ծածկանուններու Բառարան : Ամենէն աղքատ մնացած մարդը : Ոչ մէկ լուրջ հատոր : Տարեգիրքերու մէջ հանդիպած ենք քանի մը էջերու վրայ տարածուած ծածկանուններու ցանկերու, ինչպէս՝ «Հայ Կեդրոն»ի (խմբ. Յարութիւն Մուշեան, 1954) մէջ, «Հետաքրքիր Հայ Գրողները Իրենց դորձածած ծածկանուններով», (էջ 154-162) : Գարեգին Լեւոնեան, «Բառարան Հայ Գրական Ծածկանուններ», (Երկեր, Երեւան, 1963, էջ 443-478) : Նաեւ դոյուբիւն ունի «Մշակ»ի (Գ. Արծրունի) աշխատակիցներու ծածկանուններու բառարանը : Սակայն այս ուղղութեամբ դեռ հսկայական աշխատանք կայ կատարելիք :

Բոլոր տեսակի բառարանները (լեզուի, անձնանուններու, տեղանուններու եւլն․) անհրաժեշտ է որ ըլլան անվրէպ : Անոնք առձեռն հրատարակութիւններ են, մասահելի աղբիւրներ, որոնց բացատրութիւններն ու տեղեկութիւնները դիւրամատչելի ըլլալով՝ արագօրէն կրնան մեր առօրեայ կեանքին մաս կաղմել, ու եթէ սխալներ պարունակեն, այդ սխալները կրնան արմատանալ մարդոց մտայնութեան ու մտածումի մէջ, եւ մեզ առաջնորդել սխալ դատումներու :

Ստեփանեանի Կենսապրական Բառարանի Ա. հատորին թերի-
 ները մատնանշեցինք, յուսալով որ յաջորդ երկու հատորներու խմ-
 բագրութեան սլարագային անհրաժեշտ ստուգումները, սրբապրու-
 թիւներն ու յաւելումները կը կատարուին եւ մենք կ'ունենանք նը-
 ւազ թերիներ սլարունակող աշխատասիրութիւն մը :

ԱՐՏԱՇԷՍ ՏԷՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ